ՀՀ ԿԳՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ.ՊԵՏ.ԿԱՌ.Հ.04

ՔԱՐՏ 009260

ՀԱՍՑԵ Ք.ԵՐԵՎԱՆ, ԿԻԵՎՅԱՆ 16

## ՀԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ծախսած էլեկտրաէներգիայի դիմաց վճարումների հաշվառման որակը բարելավելու և հնարավոր սխալմունքներից խուսափելու նպատակով "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲ ընկերության /այսուհետ Ընկերություն/ կողմից հանրային (բացառությամբ բնակչության) բաժանորդների համար ըստ յուրաքանչյուր քարտի "Արդշինբանկ" ՓԲ ընկերությունում բացվել է անհատական բանկային հաշվեհամարներ:

Բացված բանկային անհատական հաշվեհամարը նույնականացված է բաժանորդի քարտի համարի հետ և այն արդեն իսկ նշված կլինի սույն թվականի մարտ ամսվա ծախսած էլեկտրաէներգիայի դիմաց Ընկերության կողմից դուրս գրվող վճարային փաստաթղթերում (հարկային հաշիվներ, հաշվարկային փաստաթուղթ):

Այսուհետ ծախսած էլեկտրաէներգիայի դիմաց վճարումները անհրաժեշտ է կատարել սույն թվականի մարտ ամսվա դուրս գրված վճարային փաստաթղթերում նշված հաշվեհամարին, հակառակ դեպքում այն կհամարվի չվճարված և կառաջացնի համապատասխան իրավական հետևանքներ:

Հետագա անհամաձայնություններից խուսափելու նպատակով առաջարկում ենք Ձեր հաշվառման համակարգերում (հաշվապահական ծրագրերում) նշված, սակայն արդեն իսկ փակված հաշվեհամարները փոխարինել նոր հաշվեհամարով:

"ՀԷՑ" ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ,
"Կենտրոն" տարածքային համակարգման ... Գ. Ղազինյան

"05" ապրիլ 2016թ.